



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Փողքիա՝ տարեկան 250, Վեցամսեայ 125 դրշ
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Զոլար.

Ursosianer, եմբարդիւր եւ Պաւսալիւ. Տնօրէն՝
Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
Կ.ՊՈԼԻՒՍ, Բեռլին, Գաղափարական փողոց, թիւ 171

Ա. ՏԱՐԻ

Թիւ 1



1927

ՅՈՒՆԻՍ 2

Հասք 5 դրու.



ՊԱՆՈՒՅՈՒՄ

Տար 10 դրու.

Չսպասած գրու-
թիւնք չեն վերա-
դարձուիր:

Հասք 5 դրու.

ՊԵՏԻ ԿԱՐ ԱՅՍ ՄԵՂՈՒՆ

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՍՊԱՐ ՉԵՐԱԶ

ՊԱՏԱՌԱՏՈՒՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ

ԲՈՊԻԿ ՈՏԻՈՎ

Ասոր տարակա՞ն կայ:

Յորչափ գաղափարներու ազատ արտայայտութիւնը կապտում է մամ-
լայ աղի ներկայացուցչներու մէկ մասին, ցորչափ անոնք իրենց մեծա-
նորին քրոն են հրապարակագրութիւնը. եւ արձակ ապարդի գտնելով՝
հասարակաց կարծիքի մոլորակէն ի մոլորակէն կ'առաջնորդեն անխառն,
ցորչափ իրենց մամուլի դուռներն ամուր փակած եւ հեմարտութեան ձայնը
լինելով գրիչներու դէմ, եւ անոնց գաղափարներու եւ անոնք դէմ յու-
նախակի յարձակումներ գործելով հանդերձ, չեն չօժարիր անոնց պատաս-
խաներն ալ հրատարակել, իրենց գործելակերպը յարմարցնելով անգլի-
ագետին դէմ գրեցալ յարձակում գործող ստապակներու գործելակեր-
պին, եւ այսպէս աշխատուի կը խաղան եւ կը պատրէն մոլորակը
ցորչափ ի պատգով կը պատգովանեն ապօրինաւորութիւնները, եւ գեղ-
ծումներն ու յայտնի չարաշահութիւնները քանի բողի սակ ծածկելու եւ
այդ կերպով իրենք ալ շահուելու եւ ապրուելու ստեղծութիւնն իրենց բնու-
թիւն եւ արեւոյս քրոն են՝ առանց ամենադպրի խղճահարութեան, —
ցորչափ՝ կ'ըսեն՝ հայ մամուլին մէկ մասն այս ցորչափ վիճակը կը պատ-
կերացնէ, որուն հետեւանով հասարակաց կարծիքի մոլորութեան մէջ կը
խաղալի, եւ Ազգին զգեստները եւ ու անհարկութիւնը շահագու-
ծողներն ալ կ'օգտին այդ վիճակէն, — բնականաբար Ազգին օգուտը
անմասկան շահերէ գեր ի վեր դասող շրջանակներ պէտք պիտի գտային
հրատարակութեանը անկախ ՕՌԿԱՆԻ մը, որ հեմարտութեան փողը հնչեց-
նէր՝ անվերապան եւ ամանց յետին մեքերն ու նկատումներու, փարսե-
լով խաւարը եւ լուսաւորելով մեքերը:

Ահաւասիկ այս անհամեմատ եւ այլ եւս անյետանգելի պէտքին ծնունդն
է ՄԵՂՈՒՆ:

Մեր Ազգային ներքին կեանքին մէջ, գեղծումներու, չարաշահութիւն-
ներու եւ ապօրինաւորութիւններու շրջան մ'է զոր կը բոլորենք ստիճանէ
ի վեր, եւ որուն դէմ ստիճանէ ի վեր, կը մամուլին, մամուլաւորապէս
«Ժամանակ»-ի մէջ մեր գրած յօդուածներով:

Մենք պիտի շարունակենք պայքարը նաեւ ՄԵՂՈՒՆով, զոր կը սկսինք
հրատարակել, մեր բազմաթիւ համախոհներու եւ բարեկամներու խախու-
սանքէն ֆաջալերուած:

Ազգային եւ հրապարակագրական կեանքի մէջ նորամուտ մը չենք:

[Շար. Բ, էջ]

ԿԵՍ ԿՈՒՇՏ. ԿԵՍ ԱՆՈՅԻ ԵՒ ԿԵԱՆՔԷՆ ՅՈՒՍԱՅՍ

Ժամանակի ընթերցողներու ծանօթ է
թէ բաւական մը պայքարիլ պէտք եղաւ
մեզ, Գաղափար Չերազ Էֆէնդին ազատելու
համար մեզ. Հիւանդանոցի Զիմարանոցէն,
ուր տարած արգելափակած էին գինը՝ իր
ժամանակուոր մէկ հիւանդանոցի միջո-
ցին: Զիմարանոցէն Հիւանդանոցի փոխադ-
րուելով այն տունը, բժշկական խնամքի
ենթարկուեցաւ եւ բժշկուելով իր տունը
գրեւորեցաւ:

Անիկ ի վեր քանիցս եկաւ գտաւ մեզ
եւ իր վիճակէն դանդաղեցաւ: քանիցս
ժամրայներու վրայ պատահեցանք, եւ միշտ
նայն դանդաղանքը: Խիստ յուսահատ օրե-
րու մէջ, երբեմն անձնատապանութեան խօս-
քեր ալ կ'ընէր: Իմ փրկութիւնն անձնատ-
ապանութեան մէջ է, ուրիշ ճար չունիմ,
կ'ըսէր: Կրցածիս չափ կը միտնարէի գին-
քը եւ կը յուսադէր: Բայց օրերը կ'անց-
նէին եւ իր վիճակը զէպ ի լաւ փոխ-
խախտէն մը չէր կրեր, ընդհատակը:
Իր յետին ծայր չքաւորութեան մէջ եղողի
մ'երեւոյթը՝ գինքը իր լաւ օրերուն մէջ
ճանչցողներուն արգահատանք կ'ազդէր:

Այս Ուրբաթ երեկոյ, Բերայի Ս. Եր-
րարութիւն եկեղեցւոյ փողոցէն կ'անցնէի
ուշ տունը: Տեսայ որ դիմացէն Գաղափար
Էֆէնդին կուգար, միտքը դաղափարի մը
վրայ սեւերուն եւ միանգամայն դայրացած
մարդու մը արտք քայլուածքով: Զիս տես-
նելու երեւոյթը չունէր: Դէմը ելայ եւ
կեցուցի:

— Ա՛հ, դուն ես, բարեկամս, բացա-
րանքի:

[Շար. 4-րդ էջ]

Մեր ուղղութիւնը յայտնի է: Ինչ որ էինք մեր բարձր երիտասարդութեան ասեմի՝ 1890—1897 թուականներուն՝ մեր հրատարակած **ԾԱՂԻԿ** շաբաթաթերթին մէջ, ինչ որ էինք 1909 ին մեր հրատարակած **ԳԱՐՈՒՆԻՆ** մէջ, ինչ որ էինք՝ սարկներու ընթացքին՝ բազմաթիւ առիթներով զանազան քերքերու մէջ հրատարակած մեր յօդուածներուն մէջ, նոյնն ենք եւ այժմ. նոյնը պիտի մնանք **ՄԵՂՈՒԻ** մէջ: Մեր ուղղութիւնը չէ փոխուած եւ չի փոխուիր: Մենք «անուղղայ» ներէն ենք: **ՄԵՂՈՒԻ** համբաւն ուղիղ համբաւն պիտի ըլլայ: Անոնք որ կը սիրեն ուղիղ համբաւն, քո՛ղ կարգան, քաջապետն եւ տարածեն **ՄԵՂՈՒՆ**: Ծուռ ու մաւր համբաւներու սիրահարներուն համար չէ **ՄԵՂՈՒՆ**:

ՄԵՂՈՒԻ գտած քաջապետութեան աստիճանն պիտի հասկցուի քէ, Ազգին մէջ ի՛նչ համեմատութիւն կը կազմէ ուղղութիւն սիրող հասարակարգի սէր սնունդներու քիւր:

Եւ որովհետեւ կը տեսնենք քէ, Ազգին ներկայ անկեղծարան եւ տարտառ վիճակէն օգտուելու համար սգրուկի պէս անոր կռնակը փակած եւ անոր արդէն կիսամալ եղած արիւնը ծծող ցեղերու դիմաց, Ազգին ներկայ վիճակին վրայ ի սրէ ցառող պարկեռ եւ սուղամիտ ազգայիններու ստուար քիւ մը կայ որ դարման կը փնտռէ ցառին, չենք յուսաւորուիր, եւ նկատելով Ազգը՝ բարեկարգուելու ընդունակ եւ յօժարակամ, կը ձեռնարկենք ի գործ, օգտակար ըլլալու հասարակ մտայնութեամբ եւ պատրաստակամութեամբ, եւ Ազգին բարիքը խորհող օրինաւոր եւ սրտաւ ազգայիններու կողմանէ մեր գտնելիք քաջապետութեան վրայ վստահ եւ յուսալից:

* *

ՄԵՂՈՒ պիտի հրատարակուի Հիւլիսապոլի օրերը, կէս օրին: Բաց ի օրուան Ազգ. խնդիրներու վրայ առաջնորդող յօդուածներէ, պիտի ունենայ նաեւ Գրական, Գիտական, Բանասիրական, Կրթական, Առողջապահական եւ Տնտեսական բաժիններ, ինչպէս եւ Մանկական բաժին մը, ամէնէն ալ խնամով պատրաստուած եւ ամենուն համար հասկնալի ձեւով: Պիտի պարունակէ նաեւ նկատագրական այժմէութիւններ եւ նօթեր, առօրին եւ արհեստական կարեւոր գիտելիք, զուարհալիք, սիրուն նորակէտեր, «Սքոր» ի եւ «Սինէմա» ի բաժիններ, տնտեսական նօթեր եւ օրէկագիտական ծանօթութիւններ եւ լուսարարութիւններ:

Ի մի բան **ՄԵՂՈՒ** պիտի ծառայէ ո՛չ միայն իր ընթերցողներն իրագեղ ընելու ազգային անցուղաւորներու եւ դէպքերու «խոսկական» եւ «հեմարիս» վիճակին, այլեւ պիտի հանդիսանայ միջնորդ ազգայնոց մեջ, բարոյական, փիլիսոփայական եւ տնտեսական զարգացման:

Մենք մեր առաջադրած նպատակին իրագործմանը համար մեր կողմանէ ջանք եւ գոհողութիւն չպիտի խնայենք. ընթերցող հասարակարգեան կը մնայ քաջապետ եւ զօրավիգ ըլլալ մեզ, եւ այս կերպով նպաստել հանրային բարոյին:

* *

ՄԵՂՈՒ պիտի աշխատակցին կարող եւ վարձ գրիչներ, Պոլսէն եւ Արսասանմանէն: **ՄԵՂՈՒՆ** հաւաքատեղի մը պիտի ըլլայ գրական, բանասիրական, պատմական ընկեր արտադրութիւններու: Ամէն սեւի, ամէն հասակի, ամէն խառնուածքի, ամէն զարգացումի, ամէն հաւակի սէր հայու սիրական քերքը պիտի ըլլայ **ՄԵՂՈՒՆ**, որ օգուտ, միանգամայն հանդիպ պիտի պատահուէ ամէնուն:

Խորհուրդ կուտանք մեր ընթերցող ու ընթերցողիներուն, խնամով եւ մտաւոր պահել **ՄԵՂՈՒԻ** բոլոր քիւրերն, տարուէ տարի կազմել տալու եւ սիրուն հասարակ մտնեցալու համար: Այս կերպով, տնտեսական մտնեցալուներու ամէնէն սիրուն զարգը պիտի ըլլայ **ՄԵՂՈՒ**, որուն հիւրքեղ նիւթերը չպիտի հիւնան ժամանցով, եւ ամէն ասեմ հանդիպելու օգտակարապէս պիտի կարողացուին:

3. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԾՈՒԼՈՒ ՎՐԱՅ

Նոյն վրայ, տաղերուն հետ կ'ապրի մարդ: Անմիջապէս որ ջուրի հորիզոնը ծովափերու եւ լեռներու հորիզոնին յաջորդէ, միտքը կը դիմանի աշխատութիւններէ եւ հոգածութիւններէ, — սրտն փրկարար եւ տակաւն, — արձակուրդ վաշխելու համար կարծես: Ուրախութիւն մը կը գրաւէ զինքը: Կը բանայ պատկերներու գեղեցիկ դիրքը որ ծովուն մէջ ցուցադր կրկնէ, եւ զրուար նաւուն եղերքին վրայ, կը հեղէ, եւ տակաւ կը յաջորդ կարգաւ խորտակուի անհունին:

Մարմնային մէջ շրջան կ'ընէ արիւն մը՝ նուազ պղտոր: Շարժութեամբ կը փոխուին: Մարդ չի խօսիր, կի՛ն ո՛չ, ինքն իրեն հետ: Մարդ կը մտածի մտքով, եւ անհանգստութիւնը հանգչող անհանգստութեան կ'ըլլայ, այսպէս բանը, փառաստ: Մարդ ո՛չ եւս կ'ապրի, բայց միայն իր յոտակ աշխարհը որտե՛ր մարդութիւն եւ լոյս կը ցուցանեն: Մարդ կը միջոցի չեւ գիտի ինչ կիսաթափանց եւ ստանդէն բանի մէջ որ կը մարքէ եւ որ՝ կ'անար քսել՝ կը ցուրէ ամբողջ հոգին ...:

Նոյն վրայ, տաղերուն հետ կ'ապրի մարդ:

Թրգմ. Ֆրեսէ. Յ. Գ. Փ.

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԱՒԱՆԳԱՎԵՊԵՐԷՆ

Ա. Ն Մ Ե Ռ Ո Ւ Կ

Բլուրին գագաթը, ճիշդ տակը գարնան լուսափայլ երկնին, «Անմահութիւն» (գաւթի չիչէյի) կը խօսակցի իր առանձնութեան ընկերներուն՝ Հուսամին (չափանա չիչէյի) եւ Կենիսայի (գաթը չիչէյի, genet) նետ:

— **Մէկտեղ կ'ապրինք, կ'ընէ անոնք, բայց դուք կը խառնուիք, ամէն տարի կը մեռնիք, վերադառնալու համար յաջորդ եղանակին. եւ միայն ե՛ս կը մնամ անփոփոխ:** Այ՛ մէկ **Մայիսի ամիս** նոր երիտասարդութիւն մը կուտայ ինձ: Իմ ծաղիկ միշտ կը պահէ իր միօրինակ ազօտ դէմքը: Զմեռան տառամանիքը, ամառան տարը չեն կրնար ո՛չ նախապէս եւ ո՛չ ալ աւելցնել անոր փայլը: **Մեղուները** կը զգուշանան, **Քիթիները** կը փախն ինձմէ. ապաք երբէք չեն քաղեր դիմաւորութիւն հոմ եւս, այն ծաղիկը զոր մեռնիներուն քով կը գնեն: Բայց նաեւ, եւ այն ծաղիկն եւս որ ինքզինք կը հոգայ, այն ծաղիկն որ դարեւուր ընթացքին մէջ կը պահէ իր զոյգութիւնը. ամէնէն նաեւ տարիմ ծաղիկն եւս եւ ամէնէն տեւականը. եւ Յիշատակն եւս: Անա՛ ինչո՞ւ համար, քուրիկներ, երջանիկ եւս եւ հպարտութիւն կը զգամ որ, ազօտ երեւութիւնները, կ'անձնաւորեմ ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն մեծ զգացումը որ գոյութիւն ունի երբէք: (Թարգմանում)

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ԲԱՆԱՍՏԵՂ ԾՈՒԹԻՒՆԵՐ

Ո՞վ կրնայ երբէք բացատրել ամբողջ հմայքը կամ ամբողջ ստեղծումը որ կը բնաւ կի պատուհանի մը չորս դժերուն միջև։ Պատուհանն աչքն է ուր կը ցայմնայ տան մը հոգին։ Եւ երբեմն խորհրդանշան մ'է այն ուր կ'ընդերեւի ամբողջ մէկ պատկերը կեանքին։

Տեսէք հիւզակի սա պատուհանը։ Ո՞ր չափ փոքր է։ Շրջանակը սրղակի եղած է, և սպակին՝ փոշիով ծածկուած։ Վաւրացի չուռի է Անար ընդմէջէն երբեմնակի երեւցածն է զատամած ծերուկ կնոջ մը ցամբած պլուխը կամ ցնցոտիներ հազած տղու մը գունատ նիհար դէմքը։ ԹՇՈՒՍԱՌԻԹԵԱՆ աչքն է այն։

Սա՛ տուներ, կրակն անցած է անոր մէջէն, իր կարմիր շուռը լալիկդած է միսը, և կմախքը միայն թողուցած է քարերու այս մերկութեան վրայ, պատուհաններու տեղ, կը բացուին խոշոր սև ծակեր, խորունկ և պարսպ՝ գիակի աչքերու նման։ ԱՒԵՐՈՒԹԻՒՆ աչքն է այն։

Անտառիկ տուն մը ուր գետ նոր այցիլած է Մահը, երգիկ տրամաշունչ։ Պատուհաններն, իրենց սեփ սև մեծ վարանայրներով, կը նմանին թախծալից խաւարամած աչքերու։ ՎՇՏԻ աչքն է այն։

Եկեղեցիի սա պատուհանը լայն է, մեծ, մթալդած։ Երբ իր ապակիներն երեւոյեան ճառապայթներէն կը լուսաւորուին, կարծես գերբնական արեւու մուտք մ'է որ կը հրդեհուի հոն, աւելի գեղեցիկ քան երկնքինը։ Եւ մերթ, անոր ետին կուտակուող շուքերուն ընդմէջէն, կը բացուի պղտիկ լայտերու հոյ մը, որոնց չուրջ, աստղերը քողարկող թափանցիկ ամպի մը պէս, կը պարզուին կապոյտ մեղմ գոլորչի մը երկայն խոյակաղարջի։ ԵՐԿՆԻԹԻ աչքն է այն։

Ի՞նչ պայծառութիւն, ի՞նչ շքեղութիւն սա պատուհանին մէջ որ կարծես չէնքին մարմնոյն վրայ բացուած մեծ ծաղիկ մ'է։ Արուեստագէտը զայն բռնաւորած է քանդակաւորութեան բոլոր զարգարանքով, և վաճառականն անոր տուած է մարմարիններու ազնուագոյնը և բիւրեղեաներու ամէնէն անբիծը։ Իր ապակիներուն լուսախալ թափանձկութեան ընդմէջէն կը ծածանի մետաքսեայ վարագոյրներու և ժանեակներու ամպ մը։ ԾՈՒՍՈՒԹԵԱՆ աչքն է այն։

Անա՛ բանտի պատուհան մը, նեղ և խաւարչոյն ձեղք մը, հաստ պտտի մը մէջ փորուած, չարք մը երկաթ գորաւոր ցուղերով ամրացուցուած։ Ապակիի կտորի մը ետին, զոր սարդի ստախներն և փոշին կը միգապատեն, կը տեսնես անոր փակած ստեղծարար դէմք մը, խառնափնդար մագերով, կնճռոտած ճակատով, արիւնտաճ ու սասած աչքերով խոշոր գլուխ մը, անզոր կառավարութեան վայրայարտայայտութեան մը զրոյմը կրող դիմագծերով։ ԾՈՒՍՈՒԹԵԱՆ աչքն է այն։

Պատուհանը պարտէզի մ'երեւոյթը կ'առնէ երբեմն։ Բազկը կամ սրթատունկըն անոր չրջանակը կը հաղուեցնէ իր կանաչ քամին ժանեակներով։ Թաղարներու չարք մը լուսամուտին պարսպը կը լեցնէ գունազարդ կեանքով մը։ Եւ, այս կանաչութեան և այս ծաղիկներու մէջտեղ, կը փայլի, ինչպէս զարնանային լուսինը՝ վարդակալմի սատախեայ պղտիկ ամպերու մէջտեղ, մանկամարդ աղջկան թարմ և ծիծաղկոտ դէմք մը։ ԾՆՈՐՀԱՅ աչքն է այն։

Բայց պատուհանն երբէք չէ ա՛յնքան յուզիչ ո՛րքան գիշերը, երբ՝ զոյգ վարագոյրի մը ետեւ լուսոյ կաթիլ մը կը դուրս գրուի, երկրային աստղ զոր կը պաշտեն բանաստեղծը, ուղեւորը և սիրահարը։ Ի՞նչ կ'անցնի այս կարմիր քառակուսիին ետեւ։ Թշուառութիւնն է որ կը տոգունի հոն, սէ՛րն է որ հոն կը ժպտի, սէ՛րն է որ իր երեսը կը ծռնուի։ Հանճարն է որ աշխարհ մը կը ստեղծէ հոն։ ԳԱՂՏՆՈՒԹԵԱՆ աչքն է այն։

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ
Թրգմ. Յ. Գ. Փ.

1927, Յունիս. 10

ԳԱՏՈՂՈՒԹԵԱՆ, ողջմտութեան պէտք է միանայ նաեւ արիւթիւն, ծառանայու համար չարին ու վատութեան դէմ և թե ու թիկունք հանդիսանալու բարիին և օգտակարին։ Ո՛չ ոք վախճալու է արհամարելու և անտեսելու այնպիսիները, որոնք ազգային գործերն անձնական և կուսակցական նեղմիտ հաշիւներու կը ծառայեցնեն և իրենց շահախնդիր նպատակներուն մէջ յաջողելու համար հրապարակը կը փոթորկեն սուտի ու զրուպարտութեան խօսքերով, հանրային ու շահութիւնը իրենցմէ վրիպեցնելու համար։

ԱՐՅԻ

Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԳՏՆԷՔ
ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Լաւագոյն պատասխանները պիտի հրատարակենք։

ԱՂԱՊԱՏԱՆԻ ՈՒ ՊԱՂԱՏԱՆԻ ԵՐԳԵՐ

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Ա.

Ոսկեգոյն իրիկունն
Ա՛յ կ'իջնի, յամբոսէն,
Պուրակին մէջ հարէն
Կը շրջիմ երազուն...

Կոյսի մը համբոյրին
Պես ցերմիկ... կը փառի
Գոլումներ զեփիւնին
Շրքերուս ծառաւի...

Հոգիս որ բազմալար
Տաւիղ մ'է գգայուն,
Կը բարբառ'յ անհուն
Հաճիւն բոյեւուն...

Բ.

Ա՛յ զիւրե ե ճիւղայ
Լուսանմանով օծուն,
Լրուսեան հոգեմայ
Դիւրեղն է օրորուն...

Բայց սիրս լուս կը հասնի
— Վերջալոյս Մայիսի —
Սիրելի ետք երկար,
Տե՛ր, լիւրջն է դժուար...

Ա՛յ գրաւ'յ ու եկու՛ր
Ա՛ն, գուցէ դեռ ուռ չէ,
Ու հեղ մ'ալ ինձ հրծծէ
Valse Mimi ց հեռալո՛ւր...

ՀԱՅԵԱԿ Մ. ՄԱՐՏԻՉԵԱՆ

1927 Յունիս Եօրա

ՈՐԿԱՄՈՒԹԻՒՆԸ մահացու մեղքերուն կարգը պէտք է դասել ապահով վարար, վառողի եթէ Ս. Գրքին յիշած մահացու մեղքերն հոգին կը սպաննեն, որկրամոլութիւնը մարմինը կը սպաննէ։ Սկզբնի հաճոյքները վտանգաւոր կ'ըլլան վերջ ի վերջոյ. ճիս աղանդերը նախ քան ինչ հաւատարակութիւնը կը խանգարեն, յետոյ ստամոքսը։ Բժիշկ մը իրաւամբ ըսած է. Անօթութենէ մեռնող մէկ մարդու դէմ կայ՝ շատ ուտելուն համար մեռնող հարկը հաղար մարդ։

ՀԻՆ ԷՋԵՐ

Հին բաբի սարկներն անգուր
Երանկութեան պայծառաւոր պատկերներ
Աչքիս սակ միտ կը պսցցեն,
Ու սարկներն որ պիտի գան,
Սեւ սեւ սարսուռներ
Հոգիս մէջ կը պսցցեն...

Ե. ՏԵՍԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՏՈՒՆ ԴՊՐՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ԱՁԴԱԿ

Մեր բնկերական զանազան կարգի հաստատութեանց մէջ, սովորական դարձած են պաշտօնագրական կարգ մը ձեւապաշտութիւններ:

Աստուծոյ թանձրացեալ կեղեւն են այն ոգիքն որով այդ հաստատութիւնք կը ջանան վարել իրամիտ ժողովուրդը որ, թափանցելու համար խմատային, արդարեւ, պէտք ունի զվարճանելի տարազի:

Խորհրդաւորութեամբ սրբօրում հանդէսներ, պերճաւորներ զգացումով կը լեցնեն սրբազանները և սրբապետն տեսնելու կ'արթնանան անոնց մէջ առժամաբար, զոնէ:

Բայց, քանի՜ զարգանայ ժողովուրդը, արտաքին ձեւերը կը պարզուին, երբեմն իսկ անպէտ կը համարուին. անոնց հանդիսաւոր կիրառումը այլ ևս անարդանք կը նկատուի իմաստին վերաբերման վրան զի, միտքը ձերբազատուած զգայարանաց զերութենէն՝ կ'սկսի ըմբռնել բուն ոգին:

Հետեւաբար, բնկերական հաստատութիւնք չեն կրնար, առանց վնասելու իրենց հեղինակութեան, իբր հաստատութիւն կանոն դարձնել որ սրբազան վաղընջական ձեւերն այն սկզբունքներուն զորոնք դեռ անսփոփա պահել անհրաժեշտ կը համարին, բնկերութեան բարեօրէն համար:

Քրիստոնէական եկեղեցին, մարդոց բարոյական մշակոյթին տեսակետով, կարեւոր հաստատութիւն մըն է. ոչ ոք կրնայ ուրանալ այդ ճշմարտութիւնը:

Փսալագրի էր որ եկեղեցին, իր բարոյացուցիչ դերը կատարէր տաքելական պարզութեամբ: Անոր պետերը, սակայն, յայտնի կամ թաքուն չարժանիքներով, պէտք զգացել են խաթարելու այդ պարզութիւնը, և դժբաղդաբար, եկեղեցին ներկայացուցեր են հաւատացելոց՝ իբր տեսակ մը ձեւապաշտական հանդիսարան:

Եւս ու մեծաշուք արարողութիւնք, բաւ էութեան զուրկ են՝ մեր օրով՝ ու եւ չինիչ հանդամանքէ:

Կանոնադրեալ երգեր, աղօթքներ, մաղթանք ու շարականք, հաւատացելոց համար պիտի ըլլային զգածական թելադրանքներ սրբանուէր կեանքի, եթէ զոնէ հասկնալի լեզուով մը արտայայտուին:

Եկեղեցւոյ բեմէն լսուած բնիկըցուածք կրնային, նոյն թելութեամբ, զօրաւոր զրգիւններ ըլլալ մղելու մեզ բարձրադոյն կեանքի:

Եկեղեցւոյ կենդանաբար հոգին կը կազմեն մանաւանդ անոր արժանաւոր պաշտօնականները:

Եւ սրտնք են արժաւատնէրը:

Անոնք որ վարդապետական կենտոն խնդիրներու վրայ կը ճառեն, և կամ, զիւրաքանչիւր լեզուով մը՝ ամենուին ծանօթ բաներ կը յեղեղեն քարոզչի բեմէն. որ կրնան ճարտարօրէն ծիսակատարական շարժութիւններ պարզել տաճարին մէջ. որ լաւ տիրացու՝ ձեռքերեալ ճայնարկութեամբ զիտեն Աւետարան կարգաւ առեանէն:

Անոնք արդեօք որ, ժամկարգութեան կանոնները սերտած խրացուցած, ուրիշին չեն հարցունել թէ ի՞նչ պիտի կարգացուի կամ երգուի յաջորդաբար, աւելորդ պատշաճի, ժամերգութեան պահուն:

Ոգով ու սպրիկի հանդերձանքով, անոնք, ամէնեւ ալ, կարծես զսպանակաւոր էակներ կ'զգած ըլլային, որոնք հրահանգներ են թափ տալ, պատեհ վայրկեանին, իրենց լեզուին ու թեւերուն, և որոնք առ առաւել, կրօնական ճարպիկ մարդիկներու ապաւորութիւններ կը թողուն հաւատացելոց վրայ:

Այսքան միայն, անգործ բարոյական ո՛ր և է ներգործութեան որ վարիչ դադարներու տեսական հասանք մը ստեղծէր ներկաներուն և ունկնդիրներուն հոգեկան աշխարհին մէջ:

Արժանաւոր են եկեղեցւոյ ա'յն պաշտօնականները որոնք, հոգ չէ թէ նախնական զարգացումի տէր, կը հետադարձին իրենց ժողովուրդին էակն ու պարբերով, և անոր ծառայութեան կը հրաւիրուին անշահախնդիր զարծուելութեամբ, որոնք, զարգացումի թերին օր ըստ օրէ կը լրացնեն իրենց հովուական ներհնչումն և երկնաւոր հուրէն սրով բարոյաւորած կ'ըզգան իրենց անձը:

ՍԵՊՈՒՅ

8 Մայիս 1927

ՍՏԱՇԱՆՔ. — «ՊՈՒԼԿԱՐԱՆԱՅ ՁԱՅՆ» Շարաքաբերի առաջին երկու թիւերը: Իր խմբագրական ուղղութիւնն ըլլալ կը բուի, ծառայել, «կուսակցական ցեղիկ շանեւ ու ցիւսումներէ վեր», մի միայն նազ հաւաքականութեան շանեւուն: Կր գովել «Պուլկարանայ Ձայն» ի ընդգրկած այս ազգագրական ուղղութիւնը եւ նոյն շաղկին մէջ յաջողութիւն եւ յաւանութիւն կը մարկեմք: Բաժնեկիցն է՝ արեւելեան 40, վեցսոսեալ 20 ֆրանք: Խմբագր. հասցէ՝ Setrak Karalian, Pirotka 44, Sofia. Վարչական հասցէ. Har. Papazian, Pirotka, 12, Sofia.

Կարգ մը կարեւոր յօդուածներու հրատարակութիւնը կը մնայ ՄԵՂՈՒԻ շրդ քիւին:

ԳԱՍՊԱՐ ԷՖ. ՉԵՐԱԶ

(Ա. Էֆի յօդուածին շարունակութիւնը)

Ի՞նչ կայ. Գասպար Էֆէնտի, այս տեսն ո՞ւր այցալէս:

— Ես դիտեմ՝ ո՛ւր երթայս, արտիկայ, կ'երթամ կոր իճէ. սա սի տեղ ծով մ'ըլլար, ինքզինքս ծովը նկատի, աղաւտէի. այս ի՞նչ է իմ քաջածն. անոր վերջը ո՞ւր պիտի երթայ. աւելի տղէկ չե՞ որ մէկ անգամն անձնատուան ըլլամ աղաւտիմ:

— Ի՞նչ կայ, Գասպար Էֆէնտի, նոր բան մը՞ կայ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, չե՞ս տեսներ կոր սա վիճակս. չե՞ս տեսներ կոր սա վրայ գլուխս. ես տանել հագուստներով պարտեալս մա՞րդ էի. սա մերկ ստքերուս նաւ չէ. գաւազայ մը տուող չաւնիմ որ հագնեմ. վեց ամիսէ ի վեր չամաւիւր չեմ փոխած, կորա՛յր. կեանք է այս, աղբի՛լ է այս. իմ տեղս ո՞վ չպիտի վնասէր մա՞ր. ո՞ւր են նին քարի մարդիկը. մարդիկ չաւրացել են. ինկածներուն երեսը նայալն ո՞վ է:

— Կեցի՛ր նայինք, Գասպար Էֆէնտի, հանդարտի՛ր քիչ մը որ խորհինք և վիճակիդ դարման մը գտնենք:

— Ի՞նչ դարման պիտի գտնենք. դարմանը ես գտել եմ. ծա՛լի է իմ դարմանս:

— Այցալէս մի՛ խօսիր, Գասպար Էֆէնտի. քու դարմանդ գուն չես կրնալ գտնել. քու դարմանդ ես պիտի գտնեմ, և պիտի աղապիս այս վիճակդ:

— Իրա՞ւ կ'ըսես:

— Այո՛, ես եմ քեզի բաղը, հաւատախօսքիս և յոյս ունեցիր վրաս. ինչպէս որ չարերու դէմ պայքար մղելով՝ Յիմարանոցէն ազատեցի քեզի, այս վիճակդ ալ պիտի ազատեմ, և հանգիստ պիտի ըլլաս:

— Բայց ի՞նչպէս:

— Գուն կ'ըսես թէ մարդիկ չարացիք են. բայց այս Ազգին մէջ չար մարդոց քով չստ մըն ալ բարի մարդիկ եմ. քու վիճակդ հանրութեան պիտի ներկայացնեմ, և Ազգը պիտի օգնէ քեզի քու այս ձեռութեան սարիներու մէջ, վասն զի արժանի ես օգնութեան՝ քու ա'յնքան արժանիքներով և վարած հանրօգուտ և անբասիր կեանքովդ: Համբերէ՛, համբերութիւնը կեանք է:

— Շատն ալ տանջանք է:

— Ծիչդ է բաժնդ, բայց դուն այդ շատը և տանջանքի չըման անցուցած ես. քու վիճակդ չաւաղ պիտի բարեփոխուի և շատ չուտով. քանի մ'օր ես համբերէ՛:

— Ի՞նչ պիտի ըլլայ քանի մ'օրէն:

— Քանի մ'օրէն Շարաքաբերի մը հրատարակութեան պիտի սկսիմ, և առաջին թիւին մէջ իսկ քու վիճակդ հանրութեան պիտի ներկայացնեմ. ինչպէս է՝ սի, այս Ազգին մէջ բարի մարդիկ չստ

կան և թու ամէն պէտքերդ պիտի հոգա-
յուին : Ազգը ա՛յսքան բարեգործական
հաստատութիւններ պահպանած ատեն ,
կարելի՞ բան է որ միայն Գատպար Էֆէն-
տիի մը պէս մտաւարականի մը և անցի-
լոյն մէջ անշահախնդիր զործիչի մը հա-
րնասնիքի բարի հօր մը հոգածութիւնն
անտեւ ընել :

— Կը յառազրեա կար ինծի : Ըսայց
Հաստատմ' որ բան մը պիտի ըլլայ ինծի
Համար :

— Քեզի բտոյր ես եմ, այս Ազգը պիտի հաղայ քու ամէն պէտքերդ, հաւառա՛ւ լոստրիս եւ պիտի փրկուիս :

— Ահ, արդեօք . . . (և ակառ շաղ):
— Արդեօք մարդեօք չկայ, իմ ըստծս
հոգի՛ դուն .

— Ահ, այս ի՞նչ բարերազգութիւն որ
գէմն ելար, յոյս առւի ինձի։ Ազգս
կը ճանչնամ և խօսքերսդ կը հաւատամ.
հաճերեմս պիտի։

— Հիմա ո՞ւր գլխի երթան :

— Տեղ մը չպիտի երթամ, երբ գէմն
կ'ար, չառ գէշ տրամադրուած էի, սիրտս
հանգարտեցաւ քիչ մը, որճաբան մը նըս-
տիմ, սուրճ մը խմեմ, ցետոյ տուն կ'եր-
թամ:

Եւ իրարմէլ, բաժնուէցանք :

Արդ, «ՄեՂՈՒ»-ի այս առաջին խուռով խակ, հրաւէր կը կարգանք բարեհաբրու և զգալուն Հայերու, օգնութեան փութալու Գասպար Զեւազ էֆէնտիին, իր գիրքին և անցեալին համապատասխան զանազան հագուելներու համար զինքը և իրեն բաւարար ապրուստ մը ապահովելու համար իր այս ծերութեան տարիներուն մէջ: ՄեՂՈՒ-ի Խմբագրութիւնը սիրով պիտի ընդունի և հրատարակէ այս նպատակաւ եղած մեծ և փոքր նութիրատութիւնները: Իրեւ սիլվանտորութիւն, Խմբագրութիւնս կը նուիրէ 200 զրոյ: Կը յուսանք թէ ՄեՂՈՒ-ի երկրորդ թիւով բազդը պիտի ունենանք արձանագրելու բուսական թուով նութիրատութիւններ, ի միւսիմաստութիւն հեղ Գասպար Զեւազ էֆէնտի:

Յ. Գ. ՓԱԼԱԳԻՇԵԱՆ

ՍՍՍՅԱՆՔ Բաւիզ հրասարակոյ
 ԽՈՐՀՈՑ Շաբաթաբերի 9—15 Թիւերը :
 Լաւ խմբագրուած գաւեռասերք մ'է.
 Խմբագրիւններն են *Մ. Ե. իցանց* եւ *Կ. Պե-
 տր* : Բամբեզիլինն է՝ սահեկանք 30, ղեց-
 անսնայն 20 ֆրանկ : *Հասցե. Miguirditch
 Takindjian, 11 bis, Rue Julien Certain.
 Viroflay (S et O) :* PARIS

Կր փափագէինք ունենալ 1—8 թիւերն:

ՄԵԶՈՒԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Մեղով ծանուցումներ կը հրատարակու
կէ, առկը 10 զրաւի հաշուով :

Երանույրումը որ և է գործի յաջողու-
թեան զլուսար մէկ աղբակն է. Երանու-
յրումը դրամ կը շահեցնէ : Պէտք է ամէն
մարդ խմանայ և գիտնայ թէ ինչ գործ
կ'ընէր և ո՞ւր է ձեր գործածողին կամ
գաճառատունը :

Փռվեացէ՛ր ձեր գործքն համար ծա-
նուցում գնիլ տալ ԽԵՂՈՒԿ մէջ. Ասով՝
միտ՛յն դուք չպիտի ըլլաք օգտուաւոր.
ԽԵՂՈՒՆ ալ պիտի օգտուի, բայցսակի հա-
տոյթ մը ունենալով այդ ծանուցումնիւրէն:

ՄԵԳՈՒԽ քարեկամները, անոր ուղղու-
թեան կառավարիչները, զայն տեսական եւ
նոտատո հիմներու վրայ դնելու համար,
պիտի աշխատին ուրեմն, ո՛չ միայն բառ-
ուսարացնելու անոր բաժանորդներու թիւն
եւ զայն ստորածելու, այլ եւ իրենց քարե-
կամներուն պիտի թելադրեն ծանուցում-
ներ տալ ՄԵԳՈՒԽ եւ կրկնապէս օգտակար
գործ կատարել : ՄԵԳՈՒԽ ապրելու համար
շանրածի եւ ուրիշ ստորին արարքի չպի-
տի զիջանի երբէք, այլ պիտի ուսնանայ
ու բազմանայ իր քարեկամներուն , իր
համախոհներուն տեսական համակրանքին
ու քաջայերու թեւանք մէջ :

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Տղայոց յատուկ ընթերցման գրքերու զմրագրաբար կառարկալ սով կը տիրէ մեր զրահանութեան մէջ: Ծնողք և դաստիարակք մեծ շփոթութեան մէջ կ'իյնան, երբ պէտք ըլլայ սղայոց համար ընթերցման գրքի ընտրութիւն ընել: Անոնց ձեռք արուելիք գրքին նախ՝ նիւթը զիւրմընելիք և մարտիկի ըլլալու է իրենց մտքին համար, երկրորդ՝ ո՞ր պարզ և իրթնաբանութիւններէ զերծ ըլլալու է, երրորդ՝ սիրան ու միտքը ազնուայնելու և հրահանելու հանգամանքն ունենալու է, չորրորդ՝ իսկապա զերծ ըլլալու է մանկական անմեղեղանակ կեանքի անհամապատասխան գաղափարներու և զգացումներու պատկերաշարմանէ: Այս սղայմաններու համաձայն պատշաճաբար ընտրելու է իրենց գրքերը: Կարելի է գտնել և մեր սղայոց ընթերցման համար յանձնարարել:

ԴՆԽՈՒՄ ԵՎ ԳՆԱՌԱՐԱՆԻՔ ԱՂԵՐ ԿՐ ՂԿԱՆ ԴԱՃԱՌՆ՝
 աղայաց յատուել թատերական ներկայացում մը կողման
 կերպել , բայց անոնց յարմար թատերերգութեան մը
 ընարութիւնը կը շփոթեցնէ , վասն զի այդ թատեր-
 րգութիւններու ստի՛ն ալ կայ :

Մանկանց յատուկ ընթերցման պր.քերտւ և թատ-
րերգութիւններու այս թերին մասամբ լրացնելու հա-
մար, «ՄԵՂՈՒ»-ի մէջ Մանկական գրականութիւն մ'եւս
ստեղծելու պիտի աշխատինք : Այս առաջին անգամ
Թարգմանարար Կառանք Նորոյի մը **Ելակը**, որ յուզիչ
խտորեղութիւն մ'է, յատկապէս մանուկներու համար
գրւած :

В. Г. Ф.

Կողով մը Ելակ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

[Փաստերսեր կը ներկայացնէ բլուրներով շրջապատուած նովիս մը . բլուրներուն վրայ կան բուրձի եւ եղևիկներ : Աջ կողմը , ծառի մը ստի կայ մասունք մը :]

UNQBR

Վանքում	Սարգսեան
Մինքան,	13 տարեկան
Եւգիենէ,	9 »
Առնս,	7 »
Սարգիս,	ծերունի
Յակոբ,	աղբաս
Մարիամ,	գիւղացի աղօթիկ մը

S E U F L U .

ፎቶግራፊ ፎቶ ሊፖስ

ՆԻԳԻՆԷ, կողովը ձեռքը. — Սիրելի Աշոտ,
տե՛ս ո՛րչափ ելավ կայ այստեղ. կարծես թէ անձ-
բեւոյն հետ երկինքէն թափուեալ են : Այս կար-
միր սիրունիկ պտուղները ո՛րչափ դեղեցիկ կ'ե-
րեւոյն այս շուշաններուն քով՝ որոնց ծաղիկնե-
րը ձիւնի պէս ձերմակ են, և այս ծառերուն

Հ. ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԷԿ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ

Ուղղութեամբ

Պրուսացի Յովն. Չամուրեանց Պատուելիին

«Հայաստան» քերթի Երեւանի ստալիս

Արդոյ և Պատուելի Պատու

Թէ՛ զանազան լրագրաց յաճախութիւն յաղկի ուրեք նշան կամ պատճառ զարգացման իցէ՛ չիք ինչ երկրայութիւն, մանաւանդ յորժամ ամէնայն կատարելութեան փոյթ և ջանքերուն յայտնի լինիցի :

Ամէն ազգասէր և ճշմարտասէր այսպիսի պարտի խոստովանիլ գնորտարի լրագրից ձեր՝ Հայաստան անուն որ ՚ի Հնորհա կատարման յառաջագէմն երեւեալ ըստ հասուն ոճոյ շարագրութեանն, ըստ հարազատութեան լեզուի և յատկութեան ըստ ծագիւթաց ընտրութեան նիւթոյ և ըստ պայծառ ազգայնութեան. նաեւ որ մեծն քան զամենայն է, անաչառ ճշմարտասիրութեամբ՝ աննայանձ բարեսիրութեամբ և անխորհ հայրենասիրութեան և ազգասիրութեան ոգով՝ կէտ ետեալ իւր միայն գհասարակաց բարին Ազգին և զարգացումն և անկաշառ գոտաւորման զամենայն իրաց ուղից ճանաչումն : Եւ համարուա ազգու մտածութեամբ իւրիք՝ կամ թէ լոկով իսկ յեղանակաւ պատմելոյն բանալով զաչա Ազգին առ նկատեալ օգուտան :

Վասն որոյ ուրախակից եմք Ձեզ ի պատէ և ամենայն Արդոյ վաստակակցաց, որ զբարից զայդ հոգ ՚ի մտի եղեալ և սկսայք ցուցանել Ազգին : Եւ եթէ ճշմարտ է առաւին, թէ օրն յառաւօտէն յայտ լինի, յուսամք անշուշտ զի Հայաստանց լրագրի լոյս իմն անաղօտ ծագեալ Հայաստանեայց՝ պարծանք լինիցի Ազգիս և թաղաւորեալ մայրաքաղաքիս, ոչինչ ընդհատ մնալով յեւրոպական անուանի լրագրաց :

Ձայս ազգասիրական և ճշմարտասիրութեան խնդակցութիւն թէ՛ ճարտարաբ յայտնել Ձեզ վաղորդոյն, խալիսն այն եղև՝ զի առ հեռաւորութեան մերոյ ի քաղաքից, փոքր մի առնողան Եհան ի ձեռս մեր լրագրից :

Մեծախառ ամիրայ Յակոբ Չէլէպի Տիւղեան՝ ինքն եւս հաճութեամբ յակն արկեալ զլրագրից, խնդրէ զըրել անյապաղ և գինքն յընկերութիւն «Հայաստան» իւր վասն երկու օրինակի :

Ձմտեմական և գհայրենասէր իմաստա մեր զայստիկ, հանգերձ առանձին շնորհակալութեամբ՝ վասն բարեսիրութեամբ յիշատակելոյ Յ. Թուոյ լրագրից զընտրութիւն Գերապատիւ Հօր մերոյ Գէորգայ վարդապետի հիւրմիւլեանն ՚ի Միսիթարեան Արքայութիւն, ազաչեմք ընդ ունիլ սիրով և ամէնայն Արդոյ գործակցաց ստանել ընդ ունելի, և ճանաչել զմեզ

Չերուս Ազնուութեանց

Աղօթարար Բարեկալ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՎՐԳՊ. ՄԵԽԻՍԱՐԵԱՆ

Ի Պրինկիպա Մեծ կղզին Պոլսի

22 Յուլիս 1846

Առ Արդոյ և Պատուելի Պատու Պրն. Յովնանեո Պրուսացի Տէր Կարապետեան Չամուրեանց :

Ի Քիւլիս Եեցի խալ

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Պարզ ուղղագրութեան, կամ թէ բանի, ձայնական գրութեան (Օրինակ՝ phonétique ի տեղ fonetik) կառակիցները հեռաչեալ ևր բաղմանն Անդղիոյ մէջ : Ասանցմէ մին լոնտոնեան թերթի մը մէջ հրատարակած է երկայն յօդուած մը, որով կը բացատրէ թէ՛, ուղղագրութիւնը պարզ ձեւի վերածելով, Անդղիացիք աւմէն տարի միլիոնաւոր սթէյպլին պիտի խնայեն :

Ահա՛ թէ ինչպէս բառերն աւելի քիչ գրելով գրելով, աւելի քիչ մեղան պիտի գործածուի, քիչ գրիչ պիտի մաշի, քիչ թուղթ պիտի սպասուի :

Համակներն աւելի շուտ պիտի գրուին — խնայողութիւն ժամանակի —, նուազ պիտի կշտեն — խնայողութիւն գրոշմութեւթի : Խնայողութիւն թուղթի, մեղանի, գրիչի, մատիտի, տպագրական թուղթերու, մեղանի և գրաշարողչէքի, գրի մեքենայներու ժապաւէնի, և այլն, խնայողութիւններ որոց գումարը մեր մարդը կը հասցնէ տարեկան հարիւր միլիոն սթէյպլին ոսկիէն աւելի : Բայց քիչ մը չի՞ չափաղանցեք գործօր :



ՄԵՂՈՒՆԵՐՈՒ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԲԱՐՔԸ

Մեղաները հանրածանօթ են, կը պահպանուին փեթակներու մէջ ուր կը չիսնն մեղրամոմի ծաղիք, որոց բջիջներուն մէջ կը մթերեն մեղր : Այս մեղրը յատկացուած է անուշաքնու թրթուրը որ պիտի կնէ այս բջիջներու մէջ անոնց ձգած հաւկիթէն : Վայրենի մեղուները իրենց ծաղիքը կը չիսնն ծառերու խոտջներուն մէջ :

Այս փոքրիկ անասունները կ'ապրին 30 կամ 40.000 անհոտներէ բաղկացած ընտանիքի մը նման, ուր իւրաքանչիւրն իր մասնաւոր պաշտօնն ունի : Կան էգեր և արուներ, սկստ յաւերժացնելու սահմանում, յետոյ անկասար էգեր, չէզոք ըստածները, որոնք գործաւորուհիներ կը կոչուին և պաշտօն ունին բոյները չիսնելու, բեղմնաւորիչ փոշին և քաղցր նիւթերը քաղելու, անուշաքնու համար մաշուկ մեղուները : Իւրաքանչիւր փեթակի մէջ կայ միայն մէկ էգ որ կը կոչուի թագուհի : Փեթակէն դուրս չենուր, միւս մեղուներէն աւելի մեծ է. ունի համեմատաբար մեծ որովայն մ'ալ և կ'աճէ խումբին բոլոր հաւկիթները :

Արուները գործաւորուհիներէն աւելի մեծ են և կը ճանչցուին իրենց աչքերէն, որ կը միանան գրեթէ զիսուն վերիդիմ :

Գործաւորուհիները կ'արտադրեն մեղրամոմ որ կը հաւաքուի որովայնին ներքեւ գրուած փոքր գրպաններու մէջ. յետոյ, կ'առնեն զայն, կը ծամեն, կը շաղուեն, և անով կը չիսնն իրենց ծաղիքներն բջիջները, իւրաքանչիւր ուղղաձիգ կերպով գրուած : Այս բջիջներ վեցանկիւնի են և կատարեալ կանոնաւորութեամբ չիսում, զանոնք չիսելու ծառայող գործիքներուն իսկ ձեւին հետեւանքով : Այս գործիքներն են իրենց առջևի թաթիկները որ կը տարբերին արուներուն և թագուհիին թաթիկներէն :

Արուները երկայն է, եռանկիւնաձեւ, և կը ներկայացնէ խոռոչ մը կամ կողով մը, ուր գործաւորուհին կը հաւաքէ իր քաղած բեղմնաւորիչ փոշին, ծաղիկներուն հիւթը : Ունի նաեւ կարծր մազեր, որոնց պաշ-



